



#### 10. ԳԱՌՆԻԿ ԱԽՊՈՐ ՀԵՔԻԱԹ

Կէղնի-չէղնի՝ քուր ու ախպեր մե կէղնին: Ըդոնց մամ կոտիկ մե կորեկե ճմուռ կէնե, կը դնե շառչև ուրանց, ինք կէրթա դուս: Ծնճուղ մե գիկա կանի ծառի վրեն, կը ճլվլա, կըսե:

— Ծիլիվիլի՛, բրդուճ մե ճմուռ տվեք ուտիմ, ձըղի խաբրիկ տամ՝ դարք գա գալու, ջոջո՛ւթ գա, թե՛ փոքրութ:

— Փոքրութ թըղ չիդա, ջոջութ օր գա՛ շընք դիմանա,— կըսե՝ աղջիկ:

Շատ շը քաշե աղջկա ու տղի մամ կը մեռնի, պապ ուրանց՝ թաժա կնիկ մը կառնե: Էդ խորթ մամ դճժեր կը նալըթե, կը ծեծե, անոթի կը թողե, օր մը լե մարդուն կըսե:

— Տա՛ր զքու տղեն մըջ արտի ալոսին մատղե, ցորեն շառ չիգա:

Աղջիկ օր դիմնա զէդ բան, կառնե զուր ախպերն ու կը փախնի: Շատ կէրթան, քիչ կէրթան, ախպեր կը ծառվընա: Անձրև էկեր էր, տավրու պճեղնեբու տեղ ջուր էր գուլի:

— Քուրի՛կ, ծառավ մեռա, իդա գմշու սլճեղի տեղաց ջուր խմի՛մ:

— Զէ՛, ախպեր, մը խը՛մի, կէղնիս գմեշ:

Կէրթան, կէրթան՝ տղեն գառան պճեղի տեղ ջուր կը տեսնա, էլ քրոջ իմաց չի տա, կը գաբի վրեն, կը խմե, խմելուն՝ կը դառնա

գառ: Քուր կէրթա, ու գառնիկ ախպեր բոբոալով չետեան կէրթա: Շատ կէրթան, քիչ կէրթան, կը մտնան բաղչե մե. աղբրի վրեն կը նստին, ջուր կը խմին, գառնիկ ախպեր ուրին կարծա, քուր լե գելնա վըր ծառին կը քնի:

Լուսն օր կը բացվի, թագավորի մշկըներ զծիան կը բերին վըր աղբրին, օր ջրին, ձիանք կը խոտին, ջուր շրխմին: Կիշկին վերե, կը տեսնան աղջիկ մե վըր ծառին, շաֆիս զարկեր է մըջ աղբրին: Կէրթան թագավորի տղին խարար կիտան, տղեն գիկա կը տեսնա հուրնիկ-հրեղեն աղջիկ մե՝ վըր ծառին նստուկ, կառնե կը բերե տուն, կը պսակե վըր ուրին, կէղնին հարս ու փեսա:

Թագավորի տղին ջառի մե կէղնի, շատ կը դախասնա վըր աղջըկան: Օրերուց մե օր կըսե.

— Հա՛րս, արի էրթանք ծովափ, ջուր տաքցում, զքըզի լողկըցում:

Կէրթան ծովափ, աղջիկն օր զշորեր կը հանե, կը պուպզի ջառոռ չառչե, ա՛ն հա լանգե մե վըր պառեկին, կը գլորե մըջ ծովուն, տաղլեք կը քշին զաղջիկ կը հանին կղզի մե:

Ջառին կը հագնի դաղջկա շորեր, դարսավ կառնե վրեն, զքիթ ու մոռթ կը ծածկե, գիկա տուն, տքտքալով կը մտնա մըջ ջըրուն, կը դնե զինք սուտ հիվանդութեն:

— Կը մեռնի՞մ: Թագավորի տղա, ընծի դեղ ու դո՛ւր էրե:

Թագավորի տղեն ինչքան դեղ ու դուր կիտա էնեկ, կնկա տըքտըքոց չը կտրի:

— Թագավորի տղա,—կըսե սուտմտա կնիկ,—իմ գեղ ես գինամ ինչ է՛ զիմ գառնիկ ախպոր մորթե, ուր մսեն ընծի քյարար մե կերցու, ես կաղեկանամ:

Ֆառջի ազոթըրնին ժամկոչ գելնա, օր ժամ կանչե, կը տեսնա՝ քամին ծովու դիեն ձեն մը կը բերե .

— «Ախ, ժամկո՛չ,

Քու անաուն աստվածն օր կը սիրիս,

Քու ժամն օր կը կանչիս,

Կէրթաս կըսիս թագավորի տղին,—

Ուր թևիկ թուզնա,

Ուր դանակ գուզնա,

Դագմիշ շէղնի իմ գառնիկ ախպոր՝:

Ժամկոչ կէրթա թագավորի տղին.

— Թագավոր ապրած, հմլա, հմլա ձեն լսեցի:

<sup>1</sup> Երգ է (Մ. Բ.):

Թագավորի տղեն լողվորներ կը նամպե, զաղջիկ կառնին դի-  
կան: Աղջիկ զուր գլուխ գալաժ խսա կէնե, Թագավորի տղեն դշառի:  
կը կապե ձիու պոչ, կը թողե սարեր, ավա կտոր, ավա անկաջ  
կը մնա:

Իրեք խնձոր իջավ էրկնքից, մեկ Թագավորի տղին, մեկ ուր  
կնկան, մեկ լե գառնիկ ախպոր:

